ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ

ՊԻՈՆԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՇԱԽՄԱՏԱՅԻՆ ՏՈՒՐՆԻՐ

ՀՈՒՆՎԱՐ 1939 Թ.

794
Պ-62

ԼՈՒՍՀՐԱՏ

ԵՐԵՎԱՆ 1938

22 JUL 2013
8517
194
Պ-62
25 OCT 2010

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ՀԼԿՅԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ, ՀԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏԻ ՅԵՎ ՀԽՍՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻՆ ԿԻՑ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՅԵՎ ՍՊՈՐՏԻ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՏԵՅԻ ԿՈՂՄԻՑ

5-ՐԴ ՇԱԽՄԱՏԱՅԻՆ ՏՈՒՐՆԻՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԾՐԱԳԻՐԸ

ՀԱՅԿ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀԱՅԿ.-ССР
им. А. Мясникяна
5666
238

Քանաքեռշինի տպարան, պատվեր № 5։
Գլավլիտի լիազոր՝ Ա. № 4045։ Տիրաժ 700։

1939 թ. հունվարյան արձակուրդների ընթացքում ՀԼԿՅԵՄ Կենտրոնական Կոմիտեյի և Լուսժողկոմատի կողմից Յերևանում կազմակերպվելու յե պիոներների և դպրոցականների հանրապետական շախմատային հերթական 5-րդ տուրնիրը։

Քաղաքները և շրջանները մասնակցում են տուրնիրին հետևյալ կերպ՝

1-ին ԿԱՐԳ

Յերևանը ըստ յերեք ռայոնների, Լենինականի, Կիրովականի, Վաղարշապատի, Դիլիջանի, Թալինի շրջանները և յերկաթգծի դպրոցները։

2-րդ ԿԱՐԳ

Ղամարլույի, Ստեփանավանի, Ալավերդու, Աշտարակի, Կոտայքի, Հոկտեմբերյանի, Իջևանի, Գորիսի, Նոր-Բայազետի, Մեղրու, Ղափանի և Կալինինոյի շրջանները։

3-րդ ԿԱՐԳ

Վեդու, Ապարանի, Արթիկի, Մարտունու, Ախտայի, Բասարգեչարի, Միկոյանի, Ազիզբեկովի, Ամասիայի, Շամշադինի, Սիսիանի, Սպիտակի, Ալագյազի, Աղինի, Դյուզքյանդի, Ջանգիբասարի, Կրասնոսելսկի, Ղարաբաղլարի, Նոյեմբերյանի, Սևանի և Ղուկասյանի շրջանները։

Ծանոթություն.—Թալինի շրջանը 2-րդ կարգից տեղափոխված է 1-ին կարգը, իսկ Ղափանի

շրջանը 3-րդից 2-րդ կարգը համաձայն 1938 թ. տուրնիրի արդյունքների, վորտեղ Թալինը 2-րդ կարգում, իսկ Ղափանը 3-րդում գրավեցին առաջին տեղերը։

Նույն կանոնի համաձայն, Ազիզբեկովի շրջանը 2-րդ կարգից տեղափոխված է 3-րդ կարգը, վորովհետև նույն տուրնիրում շրջանը 2-րդ կարգում գրավեց վերջին տեղը։

Մասնակցողների քանակը յուրաքանչյուր շրջանից կամ քաղաքից

1-ին կարգից—	3 տղա—	2 աղջիկ	
2-րդ »	2 »	1 »	
3-րդ »	2 »	— »	

Նախապատրաստական շրջանում տեղի յեն ունենալու՝ շախմատային մրցումներ դպրոցների ներսում նոյեմբերի 28-ից մինչև դեկտեմբերի 10-ը, իսկ շրջանի մասշտաբով (դպրոցների միջև) դեկտեմբերի 10—25-ը։

1. Հանրապետական մրցումներին մասնակցելու յեն մինչև 17 տարեկան ներառյալ պիոներ-դպրոցականներ։

2. Յերևանում, Լենինականում, Ստեփանավանում, Քանաքեռում և Նոր-Բայազետում մրցումներին մասնակցելու չեն նաև մանկատների սաները։

Յերևան մեկնելուց 2—3 որ առաջ՝ մեկնողները յենթարկվելու յեն բժշկական քննության։

Յուրաքանչյուր շրջան նշանակելու յե մեկ ուղեկցող ղեկավար, վորն իր հետ պետք է բերի՝

1. Մասնակցողների ցուցակը հետևյալ տեղեկություններով՝ ազգանուն, անուն, սեռ, տարիք, ԼԿՅԵՄ անդամ-թեկնածու, պիոներ, դպրոց, դասարան, առաջադիմության ընդհանուր գնահատական, (գերազանց, լավ, միջակ և այլն), ՅԵՊԱՊ կրծքանշանի №-ը, վոր յերբորդ անգամ է մասնակցում հանրապետական շախմատային մրցումներին, ֆիզկուլտ ինչ ձևերով և պարապում, բժշկի թույլտվությունը տուրնիրին մասնակցելու վերաբերյալ (յուրաքանչյուր ազգանվան դիմաց), շախմատային միութենական կատեգորիա։

2. Դպրոցական մրցումների աղյուսակները։

3. Շրջանային մրցումների աղյուսակը։

4. Միութենական կատեգորիա ունեցողների վկայականները։

5. 16 և 17 տարեկանների ծննդականները։

Բոլոր փաստաթղթերը (ցուցակը, աղյուսակները) ստորագրում են ԼԿՅԵՄ շրջկոմի քարտուղարը, ժողկրթության բաժնի վարիչը և Ֆ. Կ. կոմիտեյի նախագահ։

Ուղեկցող-ղեկավարն ինքը նույնպես պետք է ունենա համապատասխան փաստաթուղթ։

Տուրնիրին մասնակցողների և ուղեկցողի ճանապարհածախսը (յերկու կողմ—գալ և վերադառնալը) և ճանապարհի որապահիկը հոգում են ժողկրթության բաժինները։ Յերևանում պահանջվող բոլոր ծախսերը հոգում է Կազմ. Կոմիտեն։

Ուղեկցողի փաստաթղթում պետք է նշվի, թե ընդամենը վորքան ճանապարհածախս յեվ որապահիկ են ստացել հանրապետական տուրնիրին ուղարկվածները։ Վերադարձի ճանապարհածախս վոչ վոքի չի վճարվի։

Համաձայն գործող կանոնադրության՝ վորոշ պայմաններին համապատասխանող մասնակիցները կարող են բոլոր տիպի շախմատային տուրնիրներին (սկսած

դպրոցական տուրնիրից) ստանալ միութենական կատեգորիա. ուստի հիշեցնում ենք, որ բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացվեն մաքուր յեվ պատշաճ ստորագրություններով։

Կցվում է տեղերում տուրնիրը կազմակերպելու և վարակավորման կանոնները։

Հանրապետական տուրնիրի օրվա մասին կը հայտնվի առանձին։

ՀՐԱՀԱՆԳ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

ՊԻՈՆԵՐՆԵՐԻ ՅԵՎ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՇԱԽՄԱՏԱՅԻՆ 5-ՐԴ ՏՈՒՐՆԻՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ա. ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՇԱԽՄԱՏԱՅԻՆ ՏՈՒՐՆԻՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ

1. Դպրոցում շախմատային տուրնիր կազմակերպողները (ԼԿՅԵՄ կոմիտե, պիոներական կազմակերպություն, աշակերտական կազմակերպություն, ֆիզկուլտ խմբակի բյուրո, դպրոցի վարչություն) ցուցակագրում են այն պիոներներին ու դպրոցականներին, որոնք ցանկանում են մասնակցել շախմատային մրցումներին։ Ցուցակագրվողների թիվը մեծ լինելու դեպքում (դիցուկ մի քանի տասնյակ), նրանց բաժանում են խմբերի, յուրաքանչյուր խմբում 12—16 հոգի։ Պետք է աշխատել, որ խումբը 12-ից պակաս չլինի, որով ապահովված կլինի միութենական կատեգորիա ստանալու պայմաններից մեկը։

Յուրաքանչյուր խմբի համար կազմվում է տուրնիրային աղյուսակ հետևյալ ձևով՝

№	Ազգանուն, անուն	1	2	3	4	5	Շահած միավորներ	Գրաված տեղը
1	Հակոբյան Սահակ	☐						
2	Ղազարյան Կիմ		☐					
3	Մովսեսյան Ռոբերտ			☐				
4	Կարապետյան Վարդ.				☐			
5	Իսահակյան Նիկոլայ					☐		

2. Վերոհիշյալ աղյուսակում մասնակցողները դասավորում են վիճակահանությամբ՝ ըստ վիճակում ընկած համարի։

3. Տուրնիրում յուրաքանչյուր մասնակից մյուս մասնակցողների ամեն մեկի հետ խաղում է մեկ պարտիա միայն։ Յուրաքանչյուր պարտիայում հաղթողը շահում է 1, տարվողը 0, վոչ վոքի դեպքում խաղացողներից յուրաքանչյուրը շահում է $^1/_2$-ական միավոր։

4. Աղյուսակում տուրնիրի արդյունքները նշանակվում են հետևեալ կերպ՝

Հորիզոնական դիրքով նշանակվում են խաղացողի շահած միավորները (թվանշան), վորոնք գրվում են այն համարի տակ, վոր համարի հետ խաղացել է տվյալ խաղացողը, որինակ՝

Ղազարյանը (№ 2) տարել է Կարապետյանից (№ 4) մեկ պարտիա, ուրեմն Ղազարյանի ազգանվան դիմաց, 4-րդ սյունակում (վորովհետև խաղացել է 4-րդ համարի հետ) գրում ենք նրա շահած թվանշանը, այսինքն—1, իսկ Կարապետյանի ազգանվան դիմաց, 2-րդ սյունյակի տակ (վորովհետև խաղացել է 2-րդ համարի հետ) գրում ենք նրա շահած թվանշանը, այսինքն 0։

5. Պարզ է, վոր հորիզոնականով նշանակված թվերի գումարը (6-րդ սյունակում) ցույց կտա տվյալ խաղացողի շահած թվանշանների հանրագումարը, վորով և վորոշում է նրա գրաված տեղը տուրնիրում և նշանակվում է նրա ազգանվան դիմաց 7-րդ սյունակում (1-ին, 2-րդ և այլն)։

6. Տուրնիրում մասնակցողը պարտավոր է հանդիպում ունենալ յուրաքանչյուր խաղացողի հետ։ Չներկայանալու կամ խաղալուց հրաժարվելու դեպքում, մասնակցողն ստանում է 0 (հաշվում պարտված), հակառակորդն ստանում է 1 (հաշվում հաղթած)։

7. Դպրոցական տուրնիրում 1-ին տեղ գրավողը համարվում է տվյալ դպրոցի շախմատի առաջնություն շահողը մինչև մյուս տուրնիրը։

8. Եթե դպրոցական տուրնիրում մասնակցել են մի քանի խումբ, այդ խմբերի ներսում առաջնությունը պարզելուց հետո, առանձին խմբերում առաջնություն շահողների համար կազմակերպվում է ֆինալ, վորտեղ խմբերում առաջին տեղեր գրավողները հանդիպում են միմյանց հետ, խաղալով յերկուական պարտիա։ Ֆինալում առաջին տեղ գրավողը ստանում է դպրոցի առաջնորթությունը շահողի կոչում։

9. Դպրոցական տուրնիրում, յուրաքանչյուր խմբում, մասնակցում են 12-ից մինչև 16 հոգի։ Այն դեպքում, յեթե մասնակցողների թիվը 11-ից պակաս է, յուրաքանչյուր խաղացողը մյուս խաղացողներից ա-

մեն մեկի հետ խաղում է յերկուական պարտիա։ Համաձայն ԽՍՀՄ շախմատային կոդեքսի, միութենական կատեգորիա կարող է տրվել միայն այն տուրնիրներում, վորտեղ մասնակցողների թիվը 11 և ավելի հոգուց է բաղկացած։ Ուստի, պետք է աշխատել, վոր տուրնիրում մասնակցողների թիվը 11-ից պակաս չլինի, Նույնը վերաբերվում է և այն դպրոցներին վորտեղ մասնակցողները մի քանի խմբերի յեն բաժանված։

10. Մեկական պարտիա խաղալու դեպքում պարտիաների գույները վորոշելու համար (ով սպիտակներով է խաղալու և ով սևով) առաջնորդվել Բերգերի աղյուսակից տրված քաղվածքով (կցվում է)։

Բ. ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՇԱԽՄԱՏԱՅԻՆ ՏՈՒՐՆԻՐՆԵՐԸ

1. Տեղերում (դպրոցներում) մրցումներն ավարտելուց հետո, նրանց արդյունքները (աղյուսակները) համապատասխան ստորագրություններով (դպրոցի վարիչ-դիրեկտոր, պիոներ աշխատող, ֆիզկուլտ դասատու) ներկայացվում են շրջանային տուրնիրի կազմկոմիտեին։ Վերջինս վորոշում է տուրնիրի որերը, մասնակցողների քանակը, յենթախմբերի բաժանելու անհրաժեշտությունը և առհասարակ այն բոլոր հարցերը, վորոնք կապված են տուրնիրը կազմակերպելու հետ։

2. Շրջանային (կամ քաղաքային, ռայոնական) տուրնիրին մասնակցում են դպրոցական տուրնիրներում առաջնակարգ տեղեր գրավողները յուրաքանչյուր դպրոցից 1—2 հոգի և ավել, նայած շրջանային կազմկոմիտեի վորոշման։

3. Յերևան քաղաքում մրցումներն անց են կացվում ռայոնական մասշտաբով։

4. Շրջանային (քաղաքային, ռայոնական) մրցումներում առաջին տեղը գրավողը ստանում է շրջանի (քաղաքային, ռայոնական) պիոներ-դպրոցականների շախմատային առաջնությունը շահողի կոչում։

Գ. ՇԱԽՄԱՏԱՅԻՆ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ (ԿՎԱԼԻՖԻԿԱՑԻԱՅԻ) ԿԱՆՈՆՆԵՐԸ (ՔԱՂՎԱԾՔ ԽՍՀՄ-ի ՇԱԽՄԱՏԱՅԻՆ ԿՈԴԵՔՍԻՑ

1. Խորհրդային Միության բոլոր կազմակերպված շախմատիստները բաժանվում են հետևյալ միութենական կատեգորիաների՝

ա) ԽՍՀՄ շախմատային մայստրոներ (վարպետներ)։

բ) 1-ին կատեգորիայի շախմատիստներ

գ) 2-րդ կատեգորիայի »

դ) 3-րդ կատեգորիայի »

յե) 4-րդ կատեգորիայի »

զ) 5-րդ կատեգորիայի »

2. Շախմատային կատեգորիաները վորոշվում են համաձայն տուրնիրների արդյունքների։

3. Միութենական 5-րդ կատեգորիա տրվում է միայն այն շախմատիստներին, վորոնք մասնակցել են վերևի տուրնիրի, վորի մասնակցողների քանակը 11-ից պակաս չի յեղել և այդ տուրնիրում իրենց խա-

ղացած պարտիաներով շահել են հնարավոր միավորների (աչոկների) 50 տոկոսը։

Որինակ, մեկը խաղում է դպրոցական տուրնիրում, վորտեղ մասնակցում են 15 հոգի։ Տարել է 6 պարտիա, վոչ վոքի յե արել 3-ը և տարվել 5-ը (նա պետք է խաղար 14 պարտիա)։ Հետևապես, նա հավաքում է

6 տարած պարտիաների համար	6 միավոր	
3 վոչ վոքի արածի «	$^1/_2 — ^1/_2 — ^1/_2 = 1^1/_2$	
5 տարվածի «	0	

Ընդամենը՝ $7^1/_2$ միավոր,

վորը հնարավոր 50 տոկոսից (7-ից) բարձր է, և իրավունք է տալիս ստանալու 5-րդ կատեգորիա։

4. Այնուհետև, շրջանային կամ քաղաքային տուրնիրում, վորտեղ բոլոր մասնակցողներն արդեն ունեն 5-րդ կատեգորիա, 68 տոկոս և ավել շահողները ստանում են միութենական 4-րդ կատեգորիա։

5. Պարզ է, վոր հանրապետական տուրնիրին կմասնակցեն բացառապես (գուցե մի քանի հոգու բացառությամբ) 4-րդ կատեգորիա ունեցող պիոներ-դրպրոցականներ և այստեղ արդեն նրանք հնարավորություն կունենան ստանալու ավելի բարձր կատեգորիաներ։

6. Բոլոր տեղերում աղջիկների մրցակցություններ է կազմվում առանձին, և յեթե մրցակցողների քանակն ու շահած միավորների գումարը համապատասխանում է վերև հիշված կանոններին, նրանք ևս ստանում են միութենական կատեգորիա։

7. Միութենական բոլոր կատեգորիաները (սկսած 5-ից) հաստատում են միայն հանրապետական և

միութենական Ֆիզկուլտուրայի և Սպորտի գործերի Կոմիտեները, համաձայն պաշտոնական տվյալների, այսինքն տուրնիրների վավերացված աղյուսակների։

Ուստի բոլոր աղյուսակները, սկսած դպրոցականներից, պետք է ներկայացվեն Հայկական ԽՍՀ պիոներ-դպրոցականների 4-րդ տուրնիրի կազմկոմիտեին, վորը և ներկայացնում է այդ տվյալները Ֆիզկուլտուրայի և Սպորտի գործերի հանրապետական կոմիտեին՝ կատեգորիաները հաստատելու համար։

8. Միութենական կատեգորիա ստացող յուրաքանչյուր շախմատիստին տրվում է հատուկ ձևի գրքույկ-վկայական։

9. Հանրապետական 5-րդ տուրնիրում մրցումները տեղի կ՝ունենան ըստ կատեգորիաների. այսինքն խաղերը կ՝լինեն միայն միատեսակ կատեգորիա ունեցողների միջև։

Կազմ—կոմիտեն, ստանալով ներկայացուցիչներից տեղերում կազմակերպված տուրնիրների արդյունքները, վորոշում է մասնակցողի միութենական կատեգորիան և կազմում տուրնիրի խմբակները։

ՔԱՂՎԱԾՔՆԵՐ

ԲԵՐԳԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿԻՑ

7 ԿԱՄ 8 ՀՈԳՈՒ ՀԱՄԱՐ

1	1(8)	2,7	3,6	4,5
2	(8)5	6,4	7,3	1,2
3	2(8)	3,1	4,7	5,6
4	(8)6	7,5	1,4	2,3
5	3(8)	4,2	5,1	6,7
6	(8)7	1,6	2,5	3,4
7	4(8)	5,3	6,2	7,1

9 ԿԱՄ 10 ՀՈԳՈՒ ՀԱՄԱՐ

1	1(10)	2,9	3,8	4,7	5,6
2	(10)6	7,5	8,4	9,3	1,2
3	2(10)	3,1	4,9	5,8	6,7
4	(10)7	8,6	9,5	1,4	2,3
5	3(10)	4,2	5,1	6,9	7,8
6	(10)8	9,7	1,6	2,5	3,4
7	4(10)	5,3	6,2	7,1	8,9
8	10(9)	1,8	2,7	3,6	4,5
9	5(10)	6,4	7,3	8,2	9,1

11 ԿԱՄ 12 ՀՈԳՈՒ ՀԱՄԱՐ

1	1(12)	2,11	3,10	4,9	5,8	6,7
2	(12)7	8,6	9,5	10,4	11,3	1,2
3	2(12)	3,1	4,11	5,10	6,9	7,8
4	(12)8	9,7	10,6	11,5	1,4	2,3
5	3(12)	4,2	5,1	6,11	7,10	8,9
6	(12)9	10,8	11,7	1,6	2,5	3,4
7	4(12)	5,3	6,2	7,1	8,11	9,10
8	(12)10	11,9	1,8	2,7	3,6	4,5
9	5(12)	6,4	7,3	8,2	9,1	10,11
10	(12)11	1,10	2.9	3,8	4,7	5,6
11	6(12)	7,5	8,4	9,3	10,2	11,1

13 ԿԱՄ 14 ՀՈԳՈՒ ՀԱՄԱՐ

1	1(14)	2,13	3,12	4,11	5,10	6,9	7,8
2	(14)8	9,7	10,6	11,5	12,4	13,3	1,2
3	2(14)	3,1	4,13	5,12	6,11	7,10	8,9
4	(14)9	10,8	11,7	12,6	13,5	1,4	2,3
5	3(14)	4,2	5,1	6,13	7,12	8,11	9,10
6	(14)10	11,9	12,8	13,7	1,6	2,5	3,4
7	4(14)	5,3	6,2	7,1	8,13	9,12	10,11
8	(14)11	12,10	13,9	1,8	2,7	3,6	4,5
9	5(14)	6,4	7,3	8,2	9,1	10,13	11,12
10	14(12)	13,11	1.10	2,9	3,8	4,7	5,6
11	6(14)	7,5	8,4	9,3	10,2	11,1	12,13
12	(14)13	1,12	2,11	3,10	4,9	5,8	6,7
13	7(14)	8,6	9,5	10,4	11,3	12,2	13,1

15 ԿԱՄ 16 ՀՈԳՈՒ ՀԱՄԱՐ

1	1(16)	2,15	3,14	4,13	5,12	6,11	7,10	8,9
2	(16)9	10,8	11,7	12,6	13,5	14,4	15,3	1,2
3	2(16)	3,1	4,15	5,14	6,13	7,12	8,11	9,10
4	(16)10	11,9	12,8	13,7	14,6	15,5	1,4	2,3
5	3(16)	4,2	2,1	6,15	7,14	8,13	9,12	10,11
6	(16)11	12,10	13,9	14,8	15,7	1,6	2,5	3,4
7	4(16)	5,3	6,2	7,1	8,15	9,14	10,13	11,12
8	(16)12	13,11	14,10	15,9	1,8	2,7	3,6	4,5
9	5(16)	6,4	7,3	8,2	9,1	10,15	11.14	12,13
10	(16)13	14,12	15,11	1,10	2,9	3,8	4,7	5,6
11	6(16)	7,5	8,4	9,3	10,2	11,1	12,15	13,14
12	16(14)	15,13	1,12	2,11	3,10	4,9	5,8	6,7
13	7(16)	8,6	9,5	10,4	11,3	12,2	13,1	14,15
14	(16)15	1,14	2,13	3,12	4,11	5,10	6,9	7,8
15	8(16)	9,7	10,6	11,5	12,4	13,3	14,2	15.1

17 ԿԱՄ 18 ՀՈԳՈՒ ՀԱՄԱՐ

1	1(18)	2,17	3,16	4,15	5,14	6,13	7,12	8,11	9,10
2	(18)10	11,9	12,8	13,7	14,6	15,5	16,4	17.3	1,2
3	2(18)	3,1	4,17	5,16	6,15	7,14	8,13	9,12	10,11
4	(18)11	12,10	13,9	14,8	15,7	16,6	17,5	1,4	2,3
5	3(18)	4,2	5,1	6,17	7,16	8,15	9,14	10,13	11,12
6	18(12)	13,11	14,10	15,9	16,8	17,7	1,6	2.5	3,4
7	4(18)	5,3	6,2	7,1	8,17	9,16	10,15	11,14	12,13
8	(18)13	14.12	15,11	16,10	17,9	1,8	2,7	3,6	4,5
9	5(18)	6,4	7,3	8,2	9,1	10,17	11,16	12,15	13,14
10	(18)14	15,13	16,12	17,11	1,10	2,9	3,8	4,7	5.6
11	6(18)	7,5	8,4	9,3	10,2	11,1	12,17	13,16	14,15
12	(18)15	16,14	17,13	1,12	2,11	3,10	4,9	5.8	6,7
13	7(18)	8,6	9,5	10,4	11,3	12,2	13,1	14,17	15,16
14	(18)16	17,15	1,14	2,13	3,12	4,11	5,10	6,9	7,8
15	8(18)	9,7	10,6	11,5	12,14	13,3	14,2	15,1	16,17
16	(18)17	1,16	2,15	3,14	4,13	5,12	6,11	7,10	8,9
17	9(18)	10,8	11,7	12,6	13,5	14,4	15,3	16,2	17,1

ԿՐՃԱՏ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ԲԵՐԳԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿԻՑ ՈԳՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Բերգերի աղյուսակները ծառայում են շախմատային տուրնիրներում խաղերի հերթականությունը և խաղացողին տրամադրվող ֆիգուրների գույնը վորոշելու համար։

Տուրնիրն սկսվելուց առաջ բոլոր խաղացողներն ստանում են անձնական համարներ, վորոնք վորոշվում են վիճակահանությամբ։

Աղյուսակներում առաջին հորիզոնական սյունը ցույց է տալիս տուրը (օրինակ, օրը—1-ին, 2-րդ և այլն)։ Հետևապես հորիզոնական սյունը կտա 1-ին տուրի (օրվա) խաղերը։ Յուրաքանչյուր աղյուսակ տրված է խաղացողների յերկու թվի համար (օրինակ 7 կամ 8, 15 կամ 16)։ Յեթե խաղացողների թիվը զույգ է, աղյուսակի մեջ փոփոխություններ չեն լինում։ Իսկ յեթե կենտ է, փակագծի մեջ դրված համարները հաշվի չեն առնվում և նրանց «հակառակորդը» այդ ժամանակ ազատ է լինում։

Զույգի սկզբում դրած համարը խաղում է սպիտակներով։

Օրինակ, 17 մասնակցողների դեպքում, առաջին տուրում (օրը) խաղում են՝

№ 1-ը ազատ է

№ 2-ը (սպիտակներով) № 17-ի (սևերով) հետ։

№ 3-ը (սպիտակներով) № 16-ի (սևերով) հետ։

№ 4-ը (սպիտակներով) № 15-ի (սևերով) հետ։

5866 38
ՀՍՍՀ-ССР
им. А. Мясникян

ՊԻՈՆԵՐՆԵՐԻ ՈՒ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՏՈՒՐՆԻՐՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1-ին ՏՈՒՐՆԻՐ

1934 թ. նոյեմբերին, Երևանում

1. Մասնակցողները 34 հոգի. վորից աղջիկներ 3.
2. Տեղերի նախապատրաստական տուրնիրներին մասնակցողներ—156 հոգի։

Մասնակցող շրջանները և գրված տեղերը.

Երևան . . .	1-ին	»
Կիրովական . .	2-րդ	»
Երևանի 2-րդ թիմ .	3-րդ	»
Վաղարշապատ . .	4-րդ	»
Լենինական . .	5-րդ	»

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏԵՂԵՐ

1, 2, 3 կիսել են՝

Կարապետյան Գ. Երևան
Քալանթարյան Ա. »
Մարտիրոսյան Ա. »

2-րդ ՏՈՒՐՆԻՐ

1936 թվի հունվարին, Երևանում

1. Մասնակցողները—26 հոգի, վորից աղջիկներ 4
2. Տեղերում նախապատրաստական տուրնիրներին մասնակցողներ—279 հոգի։

Մասնակցող շրջանները և գրված տեղերը՝

ՏՂԱՆԵՐ

1-ին կարգ՝ Երևան	—	1-ին տեղ
Լենինական	—	2-րդ »
Վաղպատ	—	3-րդ »
Կիրովական—հաշվի չի առնվել, մեծահասակ մասնակցողներ ուղարկելու պատճառով։		
2-րդ կարգ՝ Ն.-Բայազետ	—	1-ին տեղ
Դիլիջան	—	2-րդ «
Ղամարլու	—	3-րդ «
Աշտարակ	—	4-րդ «
Ստեփանավան	—	5-րդ «
Ալավերդի	—	6-րդ «
Կոտայք	—	7-րդ »
3-րդ կարգ՝ Արթիկ	—	— »

ԱՂՋԻԿՆԵՐ

1-ին կարգ՝ Երևան	—	1-ին տեղ
Կիրովական	—	2-րդ »
Վաղպատ	—	3-րդ »
Լենինական	—	4-րդ »

ԱՆՀԱՏԱԿԱՆ

Տղաներ՝ Կարապետյան Գ. Երևան
Աղջիկներ՝ Քալաշյան Լ. Վաղպատ

3-րդ ՏՈՒՐՆԻՐ

1937 թվի հունվարին, Երևանում

Մասնակցողները 42 հոգի վորից աղջիկներ՝ 10

Տեղերում նախապատրաստական տուրնիրներին մասնակցել են 450 հոգի։

Մասնակցող շրջանները և գրաված տեղերը՝

1-ին կարգ՝	Ցերեվան	—1-ին տեղ
	Կիրովական	—2-րդ «
	Լենինական	—3-րդ «
	Վաղպատ	—4-րդ «
	Ն. Բայազետ	—5-րդ «
2-րդ կարգ՝	Դիլիջան	—1-ի տեղ
	Ստեփանավան	—2-րդ «
	Հոկտեմբերյան	—3-րդ «
	Կ ո տ ա յ ք	—4-րդ «

Աշտարակը, Ղամարլուն, Ալավերդին —զրկվել են կոլեկտիվ առաջնության մեջ մասնակցելու իրավունքից, գործուղված կոլեկտիվի վոչ լրիվ լինելու պատճառով (բացակայել են աղջիկները)։

3-րդ կարգ՝	Թ ա լ ի ն	— 1-ին տեղ
	Իջևան	— 2-րդ «
	Ապարան	— 3-րդ «
	Ա ր թ ի կ	— 4-րդ «
	Միկոյան	— 5-րդ «
	Ա խ տ ա	— 6-րդ «

ԱՆՀԱՏԱԿԱՆ

Տղաներ — Սարգսյան Ա. Կիրովական

Աղջիկներ — Քալաշյան Լ. Վաղպատ

4-ՐԴ ՏՈՒՐՆԻՐ

1938 թվի հունվարին, Ցերեվանում

Մասնակցողներ 88 հոգի, վորից աղջիկներ 22

Տեղերում նախապատրաստական տուրնիրներին մասնակցել են 1603 հոգի, վորից աղջիկներ՝ 286.

Միութենական 5-րդ կատեգորիա ստացել են՝ 308 հոգի

» 4-րդ կատեգորիա ստացել են 18 հ.

« 3-րդ « « « 4 «

« 2-րդ « « « 1 «

ՄԱՍՆԱԿՑՈՂ ՇՐՋԱՆՆԵՐԸ ՅԵՎ ԳՐԱՎԱԾ ՏԵՂԵՐԸ՝

1-ին կարգ՝	Ցերեվան	— 1-ին տեղ
	Կիրովական	— 2-րդ «
	Լենինական	— 3-րդ «
	Դիլիջան	— 4-րդ «
	Վաղարշապատ	5-րդ «
2-րդ կարգ՝	Թալին	— 1-ին տեղ
	Ալավերդի	— 2-րդ «
	Ն.-Բայազետ	— 3-րդ «
	Իջևան	— 4-րդ «
	Ցերկաթգծի դպրոցներ	5-րդ տեղ
	Հոկտեմբերյան	— 6-րդ տեղ
	Աշտարակ	— 7-րդ «
	Կոտայք	— 8-րդ «
	Ղամարլու	— 9-րդ «
	Ազիզբեկով	—10-րդ «

3-րդ կարգ՝ Ղափան	—	1-ին տեղ
Յերկաթգծի դպրոցների		
2-րդ կոլեկտիվ	—	2-րդ տեղ
Մ ե ղ ր ի	—	3-րդ «
Ստեփանավան	—	4-րդ «
Ա ր թ ի կ	—	5-րդ «
Ապարան	—	6-րդ «
Ամասիա	—	7-րդ «
Վ ե դ ի	—	8-րդ «

Անհատական՝ տղաներ Մկրտչյան Լ. Յերեվան
աղջիկներ Բալաշյան Լ. Վաղպատ։

ՏՈՒՐՆԻՐԸ ՊԵՏՔ Է ԽՔԱՆ ՀԱՆԴԻՍԱՆԱ ՇԱԽՄԱՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԾԱՎԱԼԵԼՈՒ ՀԱՄԱՐ։

Պատ. խմբագիր՝ Ա. Մալխասյան
Սրբագրիչ՝ Վ. Մելիքսեթյան

Հանձնված է արտադրության 14 սեպ.
Ստորագրված է տպելու 20 սեպ. 1938 թ.

472

8517

ԿԱԶՄԿՈՄԻՏԵՅԻ ԿՈՂՄԻՑ

Մինչև դեկտեմբերի 15-ը Կազմկոմիտեյին (Լուսժողկոմատի Ֆիզկուլտ կոմիտեյի հասցեյով) ներկայացնել հայտերը մասնակցության մասին՝ նշելով մեկնողների քանակը (ըստ սեռի)։

Տեղերից մեկնել կարելի չե միայն Կազմկոմիտեյի թույլտվությունից հետո։